

Սյունյաց երկիր

ՀՈՐԵՑՆԱԲԹԻ, 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ.
№ 3 (493)

www.syuniacyerkir.am

**Հեղափոխության առաջին
փուլերում բոլորն են
հավատում կոչերին
ու խոստումներին ե...
լավագույն դեպքում՝
խաբվում, վարագույնը
հեղափոխումն է, կալանքը,
գնդակահարությունը, արքորը
կամ հայրենագրկումը:**

Դավիթ Գասպարյան



Հունան Պողոսյանն այցելել է թերթի խմբագրարան

Փետրվարի 6-ին Սյունիքի մարզպետ, գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանն այցելել է «Սյունյաց երկիր» թերթի խմբագրարանում և հանդիպել լրատվամիջոցի աշխատակազմի հետ:

Մարզպետը մեկ անգամ եւս դատապարտել է փետրվարի 5-ին թերթի խմբագրության դեմ կատարված բռնարարը և հավաստիացրել, որ մարզի իրավապահ մարմիններն իրականացնում են անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ հանցագործության հանգամանքները բացահայտելու համար:

Նա հորդորել է թերթի խմբագրակազմին՝ նախկին ակտիվությամբ և հետևողականությամբ լուսաբանել մարզի առօրյան:

Հունան Պողոսյանին հետաքրքրել են պարբերականի անցած ուղին, թերթի տպագրության, առաքման, ինչպես եւ բաժանորդագրության հետ կապված հարցերը, առաջիկա ծրագրերը, որոնց վերաբերյալ հանգամանակից բացատրություններ է տվել լրատվամիջոցի խմբագիր Սամվել Ալեքսանյանը:

Թերթի խմբագիրը նաեւ հայտնել է լրատվամիջոցի ստեղծագործական անձնակազմի, նաեւ ընթերցողների ու բազմաթիվ մտավորականների պատկերացումները մարզի ընթացիկ իրավիճակի, առկա հիմնախնդիրների եւ դրանց լուծման ուղիների վերաբերյալ:

Մարզպետը հատկապես հիացնում է արտահայտել թերթի հատուկ (բացառիկ) համարների վերաբերյալ, որոնցից մի քանիսին ծանոթացավ հանդիպման ընթացքում:

Ի դեպ, առաջիկա օրերին լույս կտեսնի հայտնի մեծագույն սայաթովակետներից մեկին, նշանավոր սյունեցի Մորուս Հասարթյանին նվիրված բացառիկ համարը, որի նախնական տարբերակը մույնպես ներկայացվեց Հունան Պողոսյանին:

Դրվատանքի խոսք սավեց Աժ արտահերթ ընտրության շեմին խմբագրության կողմից ֆեյսբուքյան ուղիղ հեռարձակմամբ իրականացված հաղորդաշարի մասին որպես բացախտության եւ բազմակարծության նոր հարթակ մարզում:

Կարենուրվեց այդ հաղորդաշարը վերականգնելու անհրաժեշտությունը, որի օգնությամբ հնարավոր կլինի հանրային լայն քննարկումներ կազմակերպել Սյունիքի մարզի առօրյայի, ինչպես եւ երկրամասի հիմնախնդիրների շուրջ:

Հունան Պողոսյանը բարձր գնահատեց խմբագրության աշխատակիցների նվիրական գործունեությունը, ովքեր պրոֆեսիոնալ պատշաճ մակարդակով կարողանում են ապահովել մարզային լրատվամիջոցի սեփական դեմքն ու դիմագիծը, ինչպես եւ հանրապետության լրատվական ընտանիքում մեկուկես տասնամյակ շարունակ ունենալ ուրույն տեղ:

Սամվել Ալեքսանյանը վերջում երախտագիտություն է հայտնել Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանին՝ անկեղծ եւ անկաշկանդ հանդիպում-քննարկման համար՝ այն որակելով իրեն մարզպետարան-լրատվամիջոց համագործակցության լավագույն օրինակ:

Գեւորգ Փարսյան. «Կապան համայնքում ամեն օր մի լավ բան է արվում ...»

Փետրվարի 1-ին լրացավ Կապան համայնքի ղեկավար Գեւորգ Փարսյանի պաշտոնավարման 100 օրը: Մեկնարկային այդ շրջանի ավարտման առիթով էլ գրուցեցինք Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանի հետ:

- Պարոն Փարսյան, Դուք հանրության (եւ ոչ միայն Կապան համայնքի) ուշադրության կենտրոնում էիք հայտնվել համայնքապետի թեկնածու առաջադրվելու առաջին իսկ պահից: Այդ ուշադրությունն ու հանրային հետաքրքրությունը շարունակվեցին ոչ միայն նախընտրական, այլև հետընտրական շրջանում: Ձեր նկատմամբ հետաքրքրությունը զգալիորեն հասավ հոկտեմբերի 21-ի ընտրությունից հետո, երբ երկրի ղեկավարության մակարդակով քանիցս անդրադարձ կատարվեց ընտրության արդյունքներին: Մեզ հաճելիորեն

զարմացրեց Ձեր հանդարտ, անվրդով պահվածքը, զուսպ եւ չափավոր արձագանքն այդ ամենին: Կարո՞ղ ենք փաստել, որ ամեն ինչ հետեւում է մնացել, որ միայն հուշեր են պահպանվել:

- Եթե ինչ-որ պրոբլեմների մասին է խոսքը, ամեն ինչ մնացել է անցյալում՝ որպես հուշ: Այդ ամենը համարում եմ փակված էջ, սպառված թեմա:

էջ 6

Իվան Ղուկասովի գիրքը՝ նվիրված զորահրամանատար Հրաչ Անդրեասյանին

Լույս է տեսել ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեասյանի մասին գիրքը, որի հեղինակն է ՀՀ ԶՈՒ ռազմական հետախուզության հիմնադիր, գնդապետ Իվան Ղուկասովի:

Վերջերս հանդիպեցի իմ վաղեմի ծանոթներից սիրված զինվորական, մտավորական, ՀՀ ԶՈՒ ռազմական հետախուզության հիմնադիր, գնդապետ Իվան Ղուկասովին, ով պատմեց իր հրատարակած աշխատության մասին, որի վերնագիրն է «Հայաստանի անվանի զորահրամանատար գեներալ-լեյտենանտ Հրաչ Հմայակի Անդրեասյան», նշեց նաեւ, որ դա իր՝ նախկինում հրատարակած ռուսերեն համանուն գրքի հայերեն լրացված ու բարեփոխված տարբերակն է:

Գիրքը հրատարակվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աջակցությամբ:

Հաշվի առնելով այդ ամենը՝ հարցազրույցի հրավիրեցի գրքի հեղինակին եւ սիրված զորահրամանատարին:

Ստորեւ՝ գնդապետ Իվան Ղուկասովի հետ

մեր հարցազրույցը:

- Պարոն գնդապետ, թույլ տվեք նախենառաջ շնորհավորել գրքի հրատարակության առիթով:

- Շատ շնորհակալություն:

- Ե՞րբ եք ծանոթացել մեծ զորահրամանատարի հետ, ի՞նչ կպատմեք նրա մասին:

- Գեներալ Հրաչ Անդրեասյանի մասին առաջին անգամ լսել եմ Աֆղանստանում, որտեղ 1981թ. օգոստոսից մինչև 1984թ. հուլիս ծառայում էի որպես Աֆղանստանի զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության պետի խորհրդական:

1981թ., որպես «Վոստոկ» գոտու ավագ զինվորական խորհրդականի օգնական, Աֆղանստան ժամանեց Պետրոզավոդսկում 6-րդ համագորային բանակի շտաբի օպերատիվ բաժնի ավագ սպա Վադիմ Նակոյայկովը: Իմանալով, որ հայ եմ, նա հարցրեց. «Ընկեր գնդապետ, ծանաչում ե՞ք ձեր հիանալի հայրենակցին՝ 6-րդ համագորային բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Հրաչ Անդրեասյանին»:



էջ 2

Մերժելի եւ դատապարտելի է «Սյունյաց երկրի» դեմ ցանկացած ոտնձգությունն ու խտրական դրսեւորում

Արձագանքում են մարզային թերթի դեմ կատարված հերթական վայրագությանը



Հունան Պողոսյան, Սյունիքի մարզպետ

Սյունիքի մարզպետ, գեներալ-լեյտենանտ Հունան Պողոսյանը փետրվարի 5-ին երեւանում էր եւ մասնակցում էր ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի մոտ կազմակերպված ամենշաբաթյա խորհրդակցությանը:

Խորհրդակցությունից հետո մարզպետը հեռախոսազրույց է ունեցել «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ եւ դատապարտել տեղի ունեցած բռնարարը:

Հունան Պողոսյանը տեղեկացրել է նաեւ, որ պատահարի մասին ինքն իրազեկվել է վաղ առավոտյան, որից հետո հեռախոսային քննարկումներ է ունեցել մարզի իրավապահ մարմինների ղեկավարների հետ ու հանցագործությունը բացահայտելուն միտված հետեւողական եւ նպատակասլաց ջանքեր գործադրելու առաջադրանք տվել նրանց:

Մարզպետը նաեւ աջակցության պատրաստակամություն է հայտնել թերթի խմբագրակազմին՝ հույս ունենալով, որ կատարվածը որեւէ կերպ չի խոչընդոտի թերթի բնականոն եւ արդյունավետ գործունեությունը:



Արմեն Խաչատրյան, ԱԺ պատգամավոր

Փետրվարի 5-ին «Իմ քայլը» դաշինքի սյունեցի պատգամավորներ Կարեն Համբարձումյանն ու Արմեն Խաչատրյանը Սամվել Ալեքսանյանի հետ հեռախոսազրույցում դատապարտել են «Սյունյաց երկրի» դեմ կատարված հերթական վայրագությունը:

Պատգամավորները հավաստիացրել են, որ իրենց լիազորությունների սահմանում կանեն ամեն ինչ, որ հանցագործները բացահայտվեն ու կանգնեն արդարադա-



Կարեն Համբարձումյան, ԱԺ պատգամավոր

տության առջեւ:

Պատգամավորները միաժամանակ գորակցություն են հայտնել թերթի խմբագրակազմին՝ կարեւորելով «Սյունյաց երկրի» բացառիկ դերը Սյունիքի մարզի հասարակական-քաղաքական եւ հոգեւոր-մշակութային կյանքում եւ վստահություն հայտնել, որ թերթն ու syuniacyerkir.am կայքը անընկճ ենթակային ակտիվությամբ կշարունակեն գործել այսուհետ եւս:



Էդիկ Բարսեղյան

Սյունիքի առաջին մարզպետ, գեներալ-մայոր Սուրեն Աբրահամյանն իր զայրույթն է արտահայտել «Սյունյաց երկիր» թերթի դեմ ձեռնարկված նողկալի ոտնձգության առիթով:

Տեղի ունեցածը դատապարտել է նաեւ Սյունիքի նախկին մարզպետ, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանը:

Նրանք բարձր են գնահատել Սյունիքի մարզային թերթի դերը՝ վերջին 15 տարում երկրամասի առօրյան լուսաբանելու, մարզում բազմակարծության ու հրապարակայնության



Սուրեն Աբրահամյան

մթնոլորտի, ինչպես եւ քաղաքացիական հասարակության ձեւավորման գործում:

Սուրեն Աբրահամյանն ու Էդիկ Բարսեղյանը վստահություն են հայտնել, որ լրատվամիջոցի խմբագրակազմը կշարունակի իր հետեւողական գործունեությունը մարզի հասարակական-քաղաքական եւ հոգեւոր-մշակութային կյանքի լուսաբանման ուղղությամբ ի փառս Սյունյաց աշխարհի եւ Հայաստանի Հանրապետության:

«Սյունյաց երկրի» հետ տեղի ունեցած պատահարի մասին իմանալուց անմիջապես հետո կապի մեջ եմ իրավապահ մարմինների հետ...

Առհասարակ դատապարտում եմ ցանկացած բռնություն եւ հատկապես լրատվամիջոցների, լրագրողների դեմ բռնությունը՝ անկախ այն բանից, թե ինչ ենթատեքստ ունի այդ ամենը:

Վստահ եմ, որ կբացահայտվի թերթի խմբագրության դեմ կատարված բռնարարը:

Նաեւ հավաստիացնում եմ, որ հետեւողական եմ լինելու այդ հանցագործության բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

Հորդորում եմ թերթի խմբագրակազմին չընկճվել եւ աշխատել նախկին տեմպերով, իսկ մենք՝ պատգամավորներս, կձգտենք խորանալ լրագրի էջերում բարձրագույն հարցերի մեջ եւ ուղիներ փնտրել դրանց լուծման համար:

Առաջիկայում կհանդիպեմ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմի հետ, եւ կքննարկենք մեր համագործակցության ուղիները. այդ



ՏԻԳՐԱՆ ԿՐՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԱԺ պատգամավոր «Իմ քայլը» դաշինքից, թիվ 12 ընտրատարածք



Վահե Մ. Հակոբյան

2013-14 թթ. Սյունիքի մարզպետ Վահե Մաքսիմի Հակոբյանն իր մտահոգությունն է արտահայտել փետրվարի 5-ին «Սյունյաց երկիր» թերթի դեմ կատարված նողկալի արարքի առիթով:

- Տեղի ունեցածն ուղղակի անթույլատրելի

է, խայտառակություն է, մեր լեռնաշխարհին ոչ բնորոշ արարք,- ասել է Վահե Մաքսիմի Հակոբյանը:

Այնուհետեւ ավելացրել է. «Մենք էլ ժամանակին քանիցս աշխատանքային հակասություններ կան անհամաձայնություններ ենք ունեցել մարզային այդ լրատվամիջոցի հետ, ինչը բնական եմ համարում, սակայն մեր մտքով երբեւէ չի անցել, որ կարելի է թերթին, նրա խմբագրակազմին հալածել, հետապնդել, վնասներ պատճառել»:

- «Սյունյաց երկիր»-ը, անկախ որեւէ մեկի ցանկությունից, մշակութային լուրջ երեւոյթ է Սյունիքում, առանց այդ լրատվամիջոցի հնարավոր չէ պատկերացում կազմել մեր երկրամասի անցած 15 տարվա պատմության մասին, իսկ դա նշանակում է, որ թերթը, նրա խմբագրակազմը միայն հարգանքի ու պատկառանքի են արժանի,- իր խոսքը եզրափակել է Վահե Մաքսիմի Հակոբյանը՝ հորդորելով հանուն Սյունիքի եւ Հայաստանի Հանրապետության առաջընթացի ապահովել եւ թերթի տպագիր տարբերակի, եւ syuniacyerkir.am կայքի ստեղծագործական ակտիվ ընթացքը:



Գեյրոպ Փարսյան, Կապանի համայնքապետ

Գեյրոպ Փարսյանը Սամվել Ալեքսանյանի հետ զրույցում իր ցասումն է արտահայտել թերթի խմբագրության դեմ կատարված ոտնձգության առիթով:

Համայնքապետը պատրաստակամություն է հայտնել աջակցել խմբագրակազմին, որպեսզի լրատվամիջոցը շարունակի իր բնականոն գործունեությունը:



Աշոտ Մինասյան, «Սիսական» ջոկատի հրամանատար

Արցախյան ազատամարտում եւ Ապրիլյան իրադարձություններում հերոսաբար մարտնչած «Սիսական» ջոկատի հրամանատար Աշոտ Մինասյանը դատապարտում է «Սյունյաց երկրի» դեմ փետրվարի 5-ին կատարված հերթական եւ անոթալի քայլը:

Հրամանատարը նաեւ համոզմունք է հայտնել, որ բազմաթիվ փորձությունների միջոցով անցած խմբագրակազմն այսուհետ եւս կապահովի պարբերականի ակտիվ ու բնականոն աշխատանքը:

Գործիսի պետական համալսարանը նոր խորհրդի առաջին նիստը գումարեց



Փետրվարի 7-ին Գործիսի պետական համալսարանում կայացավ բուհի նոր խորհրդի առաջին նիստը: «ԳՊՀ» ՊՈԱԿ-ի խորհուրդը կազմավորվել է ՀՀ վարչապետի 2019 թ. հունվարի 17-ի 39-Ա որոշմամբ, եւ նրա անդամ են նաեւ (հիմնադրի անունից առաջադրված) Սյունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանը, Սյունիքի մարզպետարանի զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի պետ Էդգար Մարտիրոսյանը: Ներկա էր խորհրդի 24 անդամից 22-ը: Շնորհավորելով ԳՊՀ նոր խորհրդի

անդամներին՝ համալսարանի ղեկավար, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուր Դուկասյանը ներկայացրեց նախ հակիրճ ծանոթացրեց խորհրդի կազմման սկզբունքին, անդամների լիազորություններին ու պարտականություններին: Այնուհետեւ հնչեց բուհի հիմնը, ու նիստը վարեց խորհրդի տարիքով ամենամեծ անդամը՝ Ռազմիկ Վարդանյանը, մինչեւ օրակարգի 1-ին կետով փակ գաղտնի քվեարկությամբ կայացավ «ԳՊՀ» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի ընտրությունը. անդամները նախագահ ընտրեցին Կարեն

Չովհաննիսյանին («Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնի» տնօրեն)։ Նա թեկնածուի կարգավիճակում նախապես ներկայացրել էր իր կենսագրությունն ու աշխատանքային փորձը, ԳՊՀ դերի ու հետագա զարգացման իր տեսլականը: Բաց քվեարկությամբ խորհրդի քարտուղար ընտրվեց Թեմմինա Մարությանը: Հետո ԳՊՀ ղեկավորը հանդես եկավ հաշվետվություններով՝ 2017-2018 ուստարվա գործունեության եւ 2019 թ. եկամուտների ու ծախսերի մասին. զեկուցողին հարցեր ուղղելուց եւ քննարկումներից հետո խորհուրդը հաստատեց դրանք: Ա.Դուկասյանը զեկուցեց նաեւ «ԳՊՀ 2019-2023 թթ. ռազմավարական զարգացման ծրագրի» նախագծի մասին, որը եւս հաստատվեց որոշ վերապահումներով, քանի որ ըստ խորհրդի անդամների՝ դրանում որոշ փոփոխություններ պետք է կատարվեն: Ռեկտորն առաջարկեց նաեւ փոփոխություններ անել խորհրդի աշխատակարգում առավել հաճախակի հանդիպելու կամ համացանցային տարբերակով նիստեր գումարելու համար, քանի որ, ըստ ներկա կանոնակարգի, տարվա մեջ մեկ նիստ է նախատեսված, բայց դրանց կարիքն առավել շատ է լինում:

syunik.mtad

Կապարելով սահմանադրական պարտքը



Նարեկ Խաչատրյանը Քաջարանի N1 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Առաջին կուրսի առաջին քննաշրջանի քննությունները հանձնելուց հետո մեկնեց ազգային բանակ: Ծառայությունն անցկացրեց Մատաղիսում տեղակայված զորամասում: Այդ առիթով ասում է. «Մատաղիսն արյան զնով պահպանված տարածք է, այնտեղ այնքան արյուն է թափվել, որ դու չես կարող նահանջել, թեկուզ մի սանտիմետր հող զիջել թուրքերին: Սահման չունեցող պատասխանատվության զգացումով ես համակվում, երբ գիտակցում ես, որ այդտեղ քո ընկերոջ, քեզնից առաջ այդտեղ կանգնածի արյունն է թափվել»:

Ինչպես տեղեկացնում է Նարեկ Խաչատրյանը, ծառայության ընթացքում 12 անգամ արժանացել է խրատանքի անվանական ժամացույց, պատվոգիր, «Մատաղիսի պատվավոր զինծառայող» կոծբանշան, շնորհակալական նամակներ: Սա ինչպես է ներկայացնում ծառայության ընթացքը. «Սկզբնական շրջանում անհարմարության զգացում ես ունենում, այնուհետեւ աստիճանաբար կարգապահությունը մտնում է մեջդ, մանավանդ որ գիտակցում ես, որ ծառայում ես առաջին կարգի զորամասում: Զգում ես, որ չես կարող սխալվել, քանզի մեզնից քանի որ միայն դու կարող ես տուժել, այլ կողքիններդ»:

Երբ վերջերս մարզկենտրոն Կապանում զինակր չիկների երկրորդ խումբն էր մեկնում հանրապետական հավաքակալան, այդ առիթով կազմակերպված հանրահավաքի ժամանակ հրապարակվեց Նարեկ Խաչատրյանի օրինակելի ծառայության առիթով զորամասի հրամանատարության շնորհակալական նամակը ուղղված Սյունիքի զինկոմ, զնդապետ Արարատ Մանուչարյանին: Ի դեպ, այդ հանրահավաքի ժամանակ Նարեկ Խաչատրյանը մաղթանքի խոսքեր ուղղեց բանակ մեկնող երիտասարդներին:

- Պիտի հիշեք, որ ձեր ապրած ամեն ռուպեն 60 վայրկյանից ավելի պիտի լինի: Պիտի մշտապես արժեւորեք ձեր կատարած գործը, որովհետեւ այնտեղ սրբություն էք հսկելու՝ մեր երկրի սահմանը՝ ապահովելով այստեղ կանգնած յուրաքանչյուրի խաղաղ անդորրը: Դուք պիտի ձեր գործը կատարեք փառքով ու պատվով եւ նույն փառքով ու պատվով տուն դառնաք: Երբեք չեք կնքեք ոչնչից, ձեր ամեն մի քայլում վստահ եղեք: Թող ձեր բազուկներում միշտ ուժն անպակաս լինի:

Ինքն էլ պատվով ավարտելով պարտադիր զինվորական ծառայությունը, շարունակելու է ուսումը նախընտրած մասնագիտությամբ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ցավակցություն Գայանե Բաղդասարյանին՝ Աշոտ Չովհաննիսյանի մահվան կապակցությամբ



«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը վշտակցում է հարգելի Գայանե Բաղդասարյանին՝ հորեղբոր որդու՝ Աշոտ Չովհաննիսյանի անժամանակ մահվան կապակցությամբ: Աշոտ Չովհաննիսյանը հանկարծամահ է եղել փետրվարի 5-ին՝ կյանքի 60-րդ տարում: Աշոտ Չովհաննիսյանը ճանաչված էներգետիկ էր հանրապետության լեռնահանքային արդյունաբերությունում: Նա իր աշխատանքային գործունեությունը սկսել է Կապանի լեռնահարստացման կոմբինատում, որտեղ էլ աշխատել է երկար տարիներ: Այնուհետեւ իր մասնագիտությամբ աշխատել է Արցախի Հանրապետության Գրմբոնի լեռնահանքային համալիրում: Վերջին տարիներին գլխավորում էր Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի էներգետիկ ծառայությունը: Նորոգ հանգուցյալ Աշոտ Չովհաննիսյանը Կապանում եւ հատկապես մարզկենտրոնի հանքարդյունաբերության ոլորտում ճանաչված ու հեղինակություն վայելող Բաղդասարյան-Չովհաննիսյան գերդաստանի շահավիղն էր:

«Սյունյաց երկիր»

Ամփոփվեցին փարվա արդյունքները



Էջ 7

Ծառայության վարչության հավաքակալանը համալրվելու է նոր մեքենաներով. խորհրդային արտադրության մեքենաներին փոխարինելու են ճապոնական տեխնիկա եւ մեքենաներ, նաեւ ճապոնացիների հետ համատեղ դասընթացներ են անցկացվելու նոր տեխնիկային եւ սարքավորումներին տիրապետելու համար: «Այլեւս տեխնիկան ի վիճակի չենք լինելու. նորոգել ձեռքի տակ եղած գործիքներով»,- հիշեցրեց նա: Հարկ համարեց նաեւ ավելացնել, որ սարքավորումները ձեռք են բերվում միջազգային ծրագրերի շնորհիվ, բայց ահա փրկարարական ծառայության կադրերի վերապատրաստման խնդիր կա: Եվ մտահոգություն հայտնեց այն առիթով, որ փրկարարների դասընթացներ են անցկացվում Ռուսաստանի Դաշնությունում, իսկ երիտասարդ սերնդի շրջանում արդեն ռուսերենին տիրապետելու խնդիր է ծագել. «Եթե նախկինում խնդիրներ չունեինք ռուսերենին տիրապետող մարդկանց ներգրավել տարբեր դասընթացների մեջ, հիմա սկսել են խնդիրներ ծագել: Կարելու դասընթացների մասնակցելու համար հրավերներ կան, չգիտենք՝ ինչ անենք»:

Խորհրդակցության ավարտին Սյունիքի մարզպետ Յ. Պողոսյանը շնորհավորեց բոլոր պարգևատրվածներին՝ մշելով, որ այսօրվա պարգևը բոլորինն է, ոչ մեկի նվիրվածությունն աննկատ չի մնա: Նաեւ հորդորեց բոլոր գերատեսչություններին՝ իրենց գործունեության պլանն ավելի մոտեցնել իրական կյանքին, այլ ոչ թե 1980-ական թվականների պլանները պարբերաբար թարմացնել:

Վահրամ Օրբելյան

Սյունյաց երկիր

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Բնակչությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Քառասուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Քառասուն տպագրվող նամակ: Տպագրական՝ 1150, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.02.2019թ.:

QR կոդ